ՕԿՏԱՒ ՖԷՅԼԷ

(Oktave Feuillet)

Ներկայ թուականի սկզբում վախճանուեց Պարիզում Օկտաւ Ֆէյլէ վիպասանը։ Այդ անունը մեր գրականութեան մէջ յայտնիներիցը չէ. նորա ոչ մի գրուածքը թարգմանուած չը կայ հայերէն լեզուով։ Ոչ թէ ցաւ յայտնելու համար ենք ասում այդ՝ այլ միայն իրողութիւնը վկայելու համար։ Բայց այդ գրողը ներկայացուցիչ էր վիպական մի ուղղութեան, որը իւր ժամանակն էր ունեցել եւրոպական և մասնաւորապէս ֆրանսիական գրականութեան մէջ։ Մի չայտնի չափով նա հանրաեւրոպական հուչակ էր վայելում, շնորհիւ հեղինակի տաղանդին, հեղինակի, որը իւր ուրոյն ըմբռնողութիւնն ունէր կեանքի և վէպի մասին։ Այդ ուղղութիւնը կարող է համարուել իդէալիստական, հակառակ այն դպրոցի, որը կրում է բէալիստական անունը. բայց իդէալիստական ասելով, գեռ. և ս բոլորովին ճիշդ չի որոշւում Օկտաւ Ֆէյլէի ուղղութիւնը և նորա վէպերի բնաւորութիւնը։ Այն բնաորոշելու համար, մեզ հարկաւոր է ծանօթանալ մեզնից 30 տարի առաջ իշխող հասարակութեան հետ Ֆրանսիայում և այն՝ միայն ամենաբարձր հասարակութեան հետ, որովհետև Օկտաւ Ֆէյլէն հենց այդ բարձր արիստոկրատական շրջանի իդէալիստ վիպասանն էր։

Նապոլէոն III-ի կայսերութեան փառքի օրերն էր, երբ ամբողջ հասարակութիւնը բռնուած էր փարթամութեան և էլեգանցի եռանդով, բուռն և ընդհանուր ծարաւով՝ ցրուելու, ժամանակը զւարճութիւնների մէջ անցկացնելու։ Նոր բարձրացածների և օրուայ բաղդաւորների աչքում իսկական կեանքը այլ և ս ոչ այլ ինչ էր եթէ ոչ ֆէերիա, դեկորացիա, հեշտասիրութիւն, գայթակղիչ խարեութիւն։ Եւ ամեն մէկը իւր համար տեղ էր պահանջում այդ խրախ-

ճանքի մէջ։ Եւ նոյն իսկ նոքա, որոնք, վիճակների մեծ տարբերութեան պատճառով, այդ խնճոյքից դուրս էին, ագահաբար ձգտում էին այդ կեանքի գաղտնիքների մէջ թափանցել և նորա օդը շնչել։ Թէթև գրականութիւնն էլ տարածում էր դորա պտուղները զարմանալի աջողութեամբ։ Եւ ահա հէնց այն ժամանակն է որ ծնուեց և բացուեց, որպէս կրքի և իդէալի մի խառն ընդդիմադրծութիւն՝ Օկտաւ Ֆէյլէի արիստոկրատական ժանրը,—մի ժանր, որը արհեստական էր և զուցէ շինծու, բայց որը վերին աստիճանի հրապուրիչ քաղցրութիւն էր ներկայացնում։

Ֆէյլէն ունէր իւր ժամանակաւոր տենդենցները դուշակելու բնազդումը. որպէս անճիշդ նկարագրող, հիացնող և գեղեցկացնող՝ Պարիզի և ճոխ կեանքի մասին նա իւր սեպհական հասկացողութիւնն էր կազմել, որը բոլորովին դուրս էր սոցիալական գաղափարից և խնդիրներից. բայց այդ հասկացողութիւնը շատ համապատասխան էր ամբոխի կազմած գաղափարին այն շրջանների մասին, որ նկարագրում էր Ֆէյլէն։ Այնտեղ ամէն ինչ սէր էր, հերոսութիւն և արիստոկրատիա. այնտեղ լսւում էին խօսակցութիւններ մի հասարակութեան, ուր ամէն մէկը փայլող ոգի ունէր. այնտեղ ամենքը դուքսեր են, կոմսեր, մարքիզներ, արտիստներ և ամենքն էլ համակրելի անձեր՝ փոքրիկ և հետաքրքրական իշխանուհիներ, անբաղդ և ցաւի մէջ կամ չարչարուած հոգով արտիստներ և երաժիշտներ կամ պայծառափայլ և հպարտ հին ազնուականներ, անդիմադրելի օֆիցերներ՝ սկզբունքով գայթակղող, սովորութեամբ շ՝ այտ, բայց ամեն բանից վեր՝ սիրող հայրենիք և պատիւը և, վերջապէս ջղային կանայք, անկարգ, բարու և չարի մէջ անչափաւոր՝ բայց միշտ էլեգանտ։ Ընթերցողների երևակայութիւնները սառուեցին, սիրունիկ աչքերը լցուեցին քաղցր արտասուքով։ Ցաջողութիւնը ահագին էր։ Երիտասարդ գրողը կոչում էր դէպի մոապատրանքի կախարդանքը այնկան կանացի սրտեր, որոնք ագահաբար ձգտում էին մարմնացնել և տեսանելի դարձնել իրանց անորոշ ֆանտազիաները։ Նա հաւատացրել էր որ աժեն մի կինը, որը երեսնի և քառասնի այսինքն կէսօրէի և մթնաշաղի մէջն է՝ ճակատագրական վճռով անձնատուր է կամ կասկածների կամ փորձութիւնների։ Եւ ահա այդ առիթով անալիզներ և յամառութիւններ և այլն։ Ասելցրէք որ նա երբէք

չէր դուրս գալիս իւր ընտրած շրջանից և որ երբէք նա չէր մուռանում իւր սիրած զբաղմունքը՝ ամեն տեղ պէտք է երևար էլեգանց, բոնոնտոն, նրբութիւն, և որ նա վարպետ էր ամենահետաքրքրական պատմութիւնները զարդարել արաբեսկներով՝ քաղաքավարի, ճկուն, ճմճռող և ծաղկացրած ոճով գրուած։ Իզուր էր պնդում բէալիստական նոր դպրոցը թէ արդէն վերջին հարուածը տուել է զգայնական սենտիմենտալիզմին։ Օկտաւ Ֆէյլէի համար գոյութիւն չունէին Ֆէյդօ'ի, Միւրժէ'ի, Շամֆլեօրի'ի, Ֆլոբեր'ի գրուածները։ Եւ մինչդեռ Բալզակի հանճարը վերանում էր մարդկային կոմեդիայի բէալականութիւններից բարձր, որպէս մի ուժեղ արեգակ, Օկտաւ Ֆէյլէն ընդհակառակը շարունակում էր իդէալի միջով անցկացնել, բոմանտիքական աւերակների զարդարանքի մէջ՝ լուսնեակի լոյսը և Վալտեր Սկոտի պէյզաժները, նորա բլոնդ կանանց, ամազոնուհիներին և նորա խարտեաշ կաւալերներին։ Եւ առնում էին, ազահաբար գնում էին Ֆէյլէի գրքերը, հազիւ տպարանից դուրս եկած։

Այդ ծայրահեղ յաջողութիւնը սակայն միանգամից ձեռք չը բերուեց. նա էլ ունեցաւ իւր աստիճանները։

Օկտաւ Ֆէյլէի անունը առաջին անգամ երևաց 1845 թուականի նոյեմբերին Օդէոնի թատրոնում։ Այդտեղ խաղում էին նորա մի փոքրիկ պիեսը՝ Հռոմի քաղաքացին, որը կարճ ժամանակում բեպերտուարից հանուեց։ Հետևեալ տարին նա եկաւ միևնոյն թատրոնը հինգ գործողութեամբ մի կոմեդիայով, որ գրուած էր աշխատակցութեամբ Պոլ Բոկաժի հետ և խորագրուած էր՝ Շահ և Մատ։ Յետոյ նա գրեց՝ Պալմա, ապա՝ Ռիշելիէյի ծերութիւնը, բայց միջակ յաջողութիւն ունեցաւ։ Բայց ահա մի օր նա, կրկին կարդալով Միւսէ'ի գրուածները, աշխատելով նորոգել նորա առածների թեթև գրացիան, նորա բարոյական դաղափարներից պակասեցնելով զգացողական կողմը յոգուտ հոգու՝ նա գտաւ իւր իսկական ճանապարհը։ Միւսէն այլ ևս չէր գրում երբ 1848 և 1849 թուականներին Revue des Deux Mondes ամսագրում մէկը միւսին յաջորդեցին նուրբ գրուածներ, էսքիզներ, ոչ բոլորովին նոյնքան պիկանտ և ոչ էլ նոյնքան յաջող ոճով, որքան Միւսէինը, բայց նոցա շատ նման։ Սկզբում կարծում էին թէ Ֆէյլէն միայն նմանող է, և անհետևանք գրողներիցն է, և նորա մասին խօսում էին՝ յաճախ միայն

Միւսէին գովելու համար։ Բանը փոխուեց երբ մոդայի հոսանքը անցաւ Թատրոնին։ Օկտաւ Ֆէյլէն դառաւ օրւայ սիրուածը։ Ինքը Թատրոնական գրուածներում նա միևնոյնն էր ասում. գրեթէ ամեն տեղ հանդէս են գալիս երեսունը անցած կանայք, որոնք աշխատում են երիտասարդութեան իլլիւզիան պահպանել, մինչ ծայրահեղը հասցնել սիրելու ընդունակութիւնը, կռւելով իրանց մարդկանց անտարբերութեան դէմ և իրանց սրտի հակումների դէմ, բայց որոնք որ և է կերպով հաշտւում են իրանց մարդկանց հետ և վայելում ամուսնական սէրը։ Այդ նոյն թեման միշտ կրկնւում էր բայց այնքան նոր ձևերով, որ նոր էր թւում։

Աւելի ուշ, Օկտաւ Ֆէյլէն փոխեց թատրոնը՝ վէպի համար, որին նա տիրապետեց անվիճելի վարպետութեամբ։ Ալէքսանդր Դիւմայի դպրոցում սովորած լինելով վէպի գործողութիւնը սկսել, զարգացնել ֆաբուլան նա պահպանեց և իւր անձնականը՝ մի քաղաքավարի հասարակութեան բարք ու վարքի ճաշակը և հասկացողութիւնը։ Նորա «Մի աղքատ ջայէլ մարդու ռոմանը» (Le roman d'un jeune homme pauvre) և նորա «Սիբիլ» (Sibylle) վէպը Ֆէյլէին բացեցին Ֆրանսիական Ակադեմիայի դռները։ Նաև այսօր անփորձները, պատանիները, ջայէլ աղջիկները, պարզ և քնքոյշ սրտերը անասելի հրապոյր են զգում Ֆէյլէի հրապուրիչ վէպերից, որոնք ընթերցողին տանում են աշխարհքիս իրականութեան սահմաններից բոլորովին դուրս, ցոյց տալով այնքան մաքուր սէր, այնքան ասպետական զգացումներ, այնքան ճաճանչաւոր երազներ և իրականութիւնը այնքան բանաստեղծական։

Օկտաւ Ֆէյլէի բնաորոշ յատկութիւններն են՝ նրբութիւնը, չափը, մտերմականութիւնը, որոնք հրապուրում են երևակայութիւնը աւանդ նորան խախտելու։ Սրտի լարերը նա խաղացրել է ներկայ դարումս այնպէս, ինչպէս 18-երրորդ դարում անբաւ նուրբ Մարիւոն՝ հեղինակը «Սիրոյ և պատահմունքի խաղեր» (Jeux d'amour et du hasard) գրուածքի։ Բայց և այնպէս Ֆէյլէն զուրկ չէր ըմբռնողութեան ոյժից։ Նորա «Գր. դը Կամորս» (M. de Camors) նորերս Էմիլ Զոլան յայտարարեց որպէս շատ ուժեղ գրուածք։ Դա Օկտաւ Ֆէյլէի գործոց գլուխն է։ Նոյն յատկութիւնները կան նաև «Իւլիոս դը Տրէկեօր» (Julia de Trécoeur) և «Դալիլայի (Dalila) մէջ։

Ֆէյլէի վերջին գրուածները, օրինակ «Մեռածը» (Morte) կրում են իրագիտական դպրոցի ազդեցութիւնը։ Բայց գրականութեան մէջ Ֆէյլէն կը մնայ որպէս իգէալիստ, հոգիների մխիթարող, նուրբ և մեղմ նկարագրողը արիստոկրատիայի կեանքի։

Անկասկած է որ նա չունէր ոչ Բալզակի կորովը և ոչ Միւսսէի կամ ժորժ Զանդի կրքոտ և պսպղուն ֆանտազիան։ Բայց նա բաւականաչափ ոյժ ունէր, որ նորա մօտ գրացիան մնար գրացիա և որ վէպը բանաստեղծութեան հասնէր։ Նա ընդհանրապէս գլուխ կը լինէր մեր դարու սենտիմենտալ դպրոցի, եթէ նորանից վեր չը լինէր ժորժ Զանդը։

ԳՐ. ԱՆԱԿԵԱՆ